## *Արձանագրություն* N 3

*«ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/05» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի*

*25 օգոստոսի 2021թ, ժամը 12:00,*
*Նոր Գեղի համայնք,*
*Ֆ.Թևոսյան 64, Նոր Գեղիի համայնքապետարան*

***Մասնակցում էին հանձնաժողովի՝***
***նախագահ Տ.Գրիգորյան***
***անդամներ՝***
***Ա.Աբայան***
***Լ.Բարսեղյան***
***Քարտուղար ՝ Կ. Հայրապետյան***

### <u>*1.Տեղեկություններ «ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/05» ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին*</u>

2.1 Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են Նոր Գեղիի համայնքապետարանում, որը գտնվում է Կոտայքի մարզ, Նոր Գեղի համայնք, Ֆ. Թևոսյան 64 հասցեում, հրավերով սահմանված օրը և ժամին:

Ընդունվել է որոշում կողմ-3, դեմ-0:

### 3. <u>*«ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/05» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին*</u>

**2.1 Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.**

| N | Մասնակցի | |
|---|---|---|
| | Անվանումը | Հասցեն |
| 1 | <<ԷՅԷՄԴԻ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ>> ՍՊԸ | Արագածոտնի մարզ, Աշտարակ, Մուղնի 2 թաղամաս 191 |
| 2 | <<Մ.ԲՈՒԱՏ>> ՍՊԸ | Արարատի մարզ, գ.Հայանիստ Էջմիածնի խճղ. 35 |

### <u>3. Տեղեկություններ հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգի մասին</u>

3.1. Մասնակիցների հայտեր պարունակող ծրարները կազմվել և ներկայացվել է սահմանված կարգին համապատասխան:

### <u>4. Տվյալներ բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմանների մասին</u>

4.1 Մասնակիցների կողմից ներկայացվել է հրավերով սահմանված փաստաթղթերը՝ հրավերի պայմաններին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ 3 կողմ, դեմ՝ 0:

### <u>5. Տեղեկություններ մասնակիցների կողմից ներկայցված գնային առաջարկների մասին</u>

5.1 մասնակիցների կողմից առաջարկված գինը պայմանագրի կատարման համար ընդհանուր գումարով հետևյալն են.

| Հ/Հ | *Մասնակիցների անվանումը* | Գնային առաջարկը (առանց ԱԱՀ) | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Արժեքը | ԱԱՀ | Ընդհանուր գին | Նախահա |
| 1 | [illegible] | 56 000 000 | 11 200 000 | 67 200 000 | 67 303 215 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ՔՈՆՍԹՐԱՔՇՆ>> ՍՊԸ | | | | |
| 2 | <<Մ.ԲՈՒԱՏ>> ՍՊԸ | 56 081 667 | 11 215 333 | 67 298 000 | 67 303 215 |

5.2 Մասնակիցների կողմից ներկայցված գնային առաջարկներում չկան թվաբանական սխալներ

*Հանձնաժողովը որոշեց՝*

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները և «ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/05» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 5-րդ ենթակետի 1-ին պարբերության պահանջները, նիստը կասեցնել և վարել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ:

Բանակցությունների ընդհանուր տևողությունը սահմանվում է 30 րոպե: Եթե բանակցությունների ընդհանուր տևողության ընթացքում որևէ քայլ կատարելու պահից հաշված առաջին րոպեն լրանալը չի կատարվում նոր քայլ, ապա բանակցությունները համարվում են ավարտված:.

**6. Տեղեկատվություն հաջորդ նիստի օրվա և ժամի մասին**

*6.1* «ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/05» ծածկագրով ընթացակարգի գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման համար հանձնաժողովի նիստ հրավիրել 2021 թվականի օգոստոսի 26-ին ժամը 10:00-ին Նոր Գեղիի համայնքապետարանում, որը գտնվում է Կոտայքի մարզ, գ.Նոր Գեղի, Ֆ.Թևոսյան փողոց 64 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ 3 կողմ, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի*

*նախագահ* *Տ.Գրիգորյան*

*անդամներ*

*Ա.Աբալյան*

*Լ. Բարսեղյան*

*քարտուղար* *Կ.Հայրապետյան*